ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 49/8

29-ը հունվարի 2021 թվականի

ԵՊՀ ԻՄ-ում դրամաշնորհային մրցույթ հայտարարելու մասին ։

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 6-րդ և 12-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 6-րդ և 12-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է

1. ԵՊՀ ԻՄ -ում Հայտարարել ներքին դրամաշնորհային մրցույթ համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված 4

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2021թ. հունվարի 29-ի նիստի թիվ 49/8 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

ՀՐԱՎԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների (այսուհետ՝ Թեմա) հայտերի (այսուհետ՝ Հայտ) ներբուհական մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է՝ համաձայն «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) գիտխորհրդի N 48/9 որոշման:

1.2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Տավուշ» հետազոտական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում Տավուշի մարզի զարգացման ուղղությամբ գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար միանվագ դրամաշնորհներ կտրամադրի անհատների և գիտաուսումնական խմբերի (այսուհետ՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված Թեմաների:

1.3. Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կենտրոնի կողմից ստացած աջակցության մասին.

- *Հետազոտությունն իրականացվել է «Տավուշ» հետազոտական կենտրոնի աջակցությամբ՝ _____ ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

- *Исследование выполнено при финансовой поддержке Исследовательского центра «Тавуш» в рамках научного проекта № _____.*
- *The work was supported by the «Tavush» Research Center, in the frames of the research project № _____.*

Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվելու Թեմայի արդյունք, հետևաբար, չի ընդունվելու Հաշվետվության մեջ:

1.4. Թեմայի իրականացման ընթացքում, յուրաքանչյուր հաշվետու եռամսյակը լրանալուց հետո, Կենտրոն է ներկայացվում ընթացիկ (եռամսյակային) Հաշվետվություն, որի հիման վրա Կենտրոնը տալիս է եզրակացություն՝ Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

1.5. Թեմայի իրականացման ընթացքում Կենտրոնը կարող է իրականացնել Թեմայի մշտադիտարկում:

1.6. Թեմայի ավարտից հետո Կենտրոն է ներկայացվում ամփոփիչ Հաշվետվություն, որի հիման վրա Կենտրոնը տալիս է եզրակացություն՝ Հաշվետվությունն ընդունելու մասին:

1.7. Կենտրոնը կարող է ֆինանսավորման երաշխավորված Թեմայի անոտացիան և Հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները

2.1. Դրամաշնորհների մրցույթին կարող են ներկայացվել կոլեկտիվ կամ անհատական հայտեր, որոնք պատրաստվել են ԵՊՀ ԻՄ-ի հաստիքային աշխատակիցների կողմից՝ պայմանով, որ ղեկավարը և նախագծի ենթադրվող բոլոր կատարողների առնվազն 50 տոկոսը ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցները կամ ուսանողներն են:

2.2. Յուրաքանչյուր նախագծում կարող է լինել մեկ ղեկավար: Որպես ղեկավար՝ գիտնականը նախագծերի ցանկացած տեսակից կարող է ներկայացնել միայն մեկ հայտ: Նախագծի ղեկավար գիտնականը կարող է հանդես գալ որպես կատարող մյուս հայտերից ևս մեկում: Ըստ ցանկացած հայտերի՝ նախագծի ղեկավար չհանդիսացող գիտնականը որպես կատարող կարող է հանդես գալ ոչ ավելի, քան գիտահետազոտական երկու նախագծում:

3. Ակնկալվող արդյունքները

3.1. Թեմայի ավարտից հետո Նախագծի անդամները տվյալ Թեմայի շրջանակներում պետք է ունենան Մրցույթի հրավերի **«1.3.»** ենթակետով սահմանված նշումով հրապարակումներ:

3.2. Թեմայի իրականացման ընթացքում Նախագծի անդամները պետք է ապահովեն Թեմայի և/կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և տարածում (հարցազրույցներ, գիտահանրամատչելի ամսագրերում հրապարակումներ, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն Հանձնաժողովի կողմից ամփոփիչ Հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:

4. Հայտ ներկայացնելը

4.1. Հայտը ներկայացնում է Խմբի ղեկավարը՝ մինչև 2021 թվականի Մարտի 1-ը ներառյալ:

4.2. Մրցույթի հայտերը պարունակում են.

- Տեղեկատվություն ծրագրի մասին,
- Ծրագրի պատասխանատուների կոնտակտային տվյալները,
- Ծրագրի ազդեցությունը ԵՊՀ ԻՄ-ի կամ Տավուշի մարզի գործունեության վրա, ծրագրի շարունակականությունը,
- Արդյունքները, դրանց տարածումը և կիրառումը ԵՊՀ ԻՄ-ում կամ տարածաշրջանում,
- Արտաքին շահակիցների հետ համագործակցությունը ծրագրերի շրջանակում,
- Հրավիրված մասնագետների, փորձագետների և ուսուցանողների ցուցակը (եթե կան),
- Ծրագրի արդյունքները:

4.3. Պահանջվող փաստաթղթերը Կենտրոն են ներկայացվում աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-12:00 կամ փոստով: Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը 2021 թվականի Մարտի 1-ն է:

4.4. Հայտը ներկայացվում է սոսնձված և ստորագրված ծրարով: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և 2 կրկնօրինակներից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը:

4.5. Կենտրոնը մասնակցին տալիս է հայտն ընդունելու մասին տեղեկանք:

4.6. Նախապատվությունը կտրվի այն թեմաներին, որոնցում առավելապես ներգրավված կլինեն Մասնաճյուղի դասախոսները և ուսանողները:

4.7. Մրցույթի հայտերը պետք է նախապատրաստվեն «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում գիտական դրամաշնորհների տրամադրման կարգի համաձայն և ներկայացվեն մրցույթ հայտարարելու մասին մասնաճյուղի գիտական խորհրդի որոշման մեջ նշված կարգով և ժամկետներում:

4.8. Մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտն իրավունք ունի փոխելու կամ հետ վերցնելու իր հայտը: Հայտը փոփոխվում է վերոնշյալ կարգով հայտ ներկայացնելու համար սահմանված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

4.9. Հայտը չի քննարկվում, եթե.

- դրա աշխատանքների կատարումն արդեն ֆինանսավորվում է (լրիվ կամ մասնակի) այլ նախագծի շրջանակներում ֆինանսավորման արտաքին աղբյուրից (բյուջետային կամ արտաբյուջետային),
- չի համապատասխանում սահմանված կարգի պահանջներին կամ ներկայացվել է հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո:

5. Մրցույթի արդյունքների բողոքարկումը

5.1. Մրցույթի արդյունքները կարող են բողոքարկվել Մրցույթի արդյունքները ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքում (www.ijevan.ysu.am) հրապարակելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Խմբի ղեկավարի գրավոր դիմումով:

5.2. Բողոքարկման դեպքում Հայտը մեկ փորձագետի կողմից ենթարկվում է կրկնակի գիտական փորձաքննության, արդյունքում ձևավորվում է Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը, որը կրկնակի գիտական փորձաքննության գնահատականի և դրան մոտ հիմնական գիտական փորձաքննության գնահատականի միջին թվաբանականն է:

5.3. Կենտրոնի ղեկավարը, հաշվի առնելով փորձաքննության հիմնական փուլից հետո առկա ֆինանսական հնարավորությունները, որոշում է բողոքարկման արդյունքում ձևավորված նոր շեմային գնահատականը, որը հավասար է կամ գերազանցում է տվյալ ոլորտի համար սահմանված շեմային գնահատականին:

5.4. Բողոքարկման արդյունքում Հայտը երաշխավորվում է ֆինանսավորման, եթե Հայտի վերջնական գնահատականը հավասար է կամ գերազանցում է տվյալ ոլորտի համար սահմանված նոր շեմային գնահատականին:

5.5. Եթե բողոքարկման արդյունքում տվյալ մասնագիտության նոր շեմային գնահատականը հաղթահարել են ավելի մեծ թվով Հայտեր, քան հնարավոր է ֆինանսավորել, փորձագիտական հավասար գնահատականի դեպքում, Հանձնաժողովը ծանոթանում է Թեմայի կատարման համար անհրաժեշտ հնարավորությունների առկայությանը, որից հետո միայն Կենտրոնի ղեկավարին տալիս է առաջարկություն՝ Հայտը ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկում ընդգրկելու վերաբերյալ:

5.6. Հայտի կրկնակի փորձաքննության փորձագիտական եզրակացությունը վերջնական է:

5.7. Բողոքարկված Հայտերի հեղինակները բողոքարկման արդյունքների վերաբերյալ տեղեկացվում են էլ. փոստի միջոցով:

6. Այլ դրույթներ

6.1. Մասնաճյուղի և ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի արտաբյուջետային միջոցներից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր:

6.2. Ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի և Խմբի կատարողների միջև, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով, կնքվում են պայմանագրեր, որոնց պատճենները ներկայացվում են Կենտրոն:

6.3. Տավուշի մարզի զարգացման ուղղությամբ իրականացվելիք Թեմաների 12-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալները նախատեսել.

6.3.1. Անհատական հայտերի համար համապատասխանաբար՝

- մինչև 500.000 ՀՀ դրամ՝ փորձարարական հետազոտություններ նախատեսած թեմաների համար,

- մինչև 300.000 ՀՀ դրամ՝ տեսական հետազոտություններ նախատեսած թեմաների համար:

6.3.2. Կոլեկտիվ հայտերի համար համապատասխանաբար՝

- մինչև 750.000 ՀՀ դրամ՝ փորձարարական հետազոտություններ նախատեսած թեմաների համար,
- մինչև 500.000 ՀՀ դրամ՝ տեսական հետազոտություններ նախատեսած թեմաների համար:

6.4. Խմբի ղեկավարը կարող է դիմել Կենտրոն Խմբի կատարողի համարժեք փոփոխություն կատարելու՝ ըստ տարիքային խմբի և գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի, կամ Խմբի կատարողների թիվը մեկով կրճատելու միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում(ներ)ը: Խմբի կատարողների թվի կրճատման դեպքում Խմբի ղեկավարի և Կենտրոնի միջև կնքվում է պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

Հավելված 1

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն

պ-ն _____

ԵՊՀ ԻՄ-ի_____ _____

_____ ամբիոնի

_____ ից

(անուն-հայրանուն, ազգանուն)

_____

(էլ. հասցե)

_____

(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Ձեզ է ներկայացվում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության ներբուհական մրցույթին մասնակցելու «_____» վերնագրով նախագիծը:

Խնդրում եմ սահմանված կարգով ընթացք տալ:

Դիմող՝ _____ (_____)

(ստորագրություն) (անուն-ազգանուն)

«____» _____ 202-թ.

Հավելված 2

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ

ՀԱՅՏ

Հայտը հանձնված է «_____» _____ 202- թ. Ծածկագիր՝ _____

(լրացվում է «Տավուշ» հետազոտական կենտրոնի կողմից)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի

- վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերեն)

_____

2. Հուշող (բանալի) բառեր (հայերեն)

_____

Հայտի ղեկավարի

- ազգանունը, անունը, հայրանունը _____
- ծննդյան տարեթիվը _____
- գիտական աստիճանը և կոչումը _____
- պաշտոնը _____
- հեռախոսը _____
- էլեկտրոնային հասցեն _____

3. Ամբիոնը _____

4. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ տարի

5. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը _____

6. Հայցվող ընդհանուր գումարը _____ դրամ

7. Հայտի ղեկավարի ստորագրությունը _____

8. ԵՊՀ ԻՄ-ի «Տավուշ» հետազոտական կենտրոնի ղեկավարի ստորագրությունը _____

«____» _____ 202— թ. Կ.Տ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Ազգանունը, անունը, հայրանունը _____

2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը _____

3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն) _____

4. Գիտական աստիճանը և կոչումը _____

5. Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը

_____

6. Հրատարակված

- գիտական հոդվածներ (թիվը) _____

- մենագրություններ (թիվը) _____

7. Արտոնագրեր (թիվը) _____

8. Լիցենզիաներ (թիվը) _____

9. Վերջին 5 տարում ներկայացվող թեմային վերաբերող հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը,

ամսագիրը, տարեթիվը, հատորը, էջերը)

1) _____

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

10. Ստացված դրամաշնորհները

1) _____

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

«____» _____ 202- թ. _____

(ղեկավարի ստորագրությունը)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ

Ազգանունը, անունը, հայրանունը (հայերեն)	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոսը (աշխատանքային, տան, բջջային)	
Էլեկտրոնային հասցեն	
Նախագծի հետ առնչվող հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարեթիվը, հատորը, էջերը), 5-ից ոչ ավելի	
1. 2.	

Հավելված 3

Հայտերի փորձաքննության կազմակերպումը

1.1. Մրցութային մասնակիցներին որոշելու մասին արձանագրության հաստատումից հետո, ԵՊՀ ԻՄ-ի գիտական կենտրոնն անցկացնում է նյութերի փորձաքննություն՝ ըստ տվյալ դրամաշնորհի համար սահմանված չափանիշների: 10 օրացուցային օրվա ընթացքում իրականացվում է գիտական փորձաքննություն:

1.2. Գիտական փորձաքննության խնդիրը հայտարարված գիտահետազոտական աշխատանքի գիտական, գիտատեխնիկական և գործնական արժեքի գնահատումն է: Անհրաժեշտության դեպքում գիտության բաժինը փորձաքննության համար կարող է ներգրավել անկախ փորձագետի (ով այն ստորաբաժանման աշխատակիցը չէ, որտեղ աշխատում է հայտատուն):

1.3. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն երկու արտաքին փորձագետի կողմից: Որպես փորձագետներ ընտրվում են տվյալ ոլորտի մասնագետները: Յուրաքանչյուր հայտի համար փորձագետը լրացնում է մասնաճյուղի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին:

1.4. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում է հայտի հետազոտության թեմայի արդիականությունը, հետազոտության արդյունքների իրացման նշանակությունը, ֆինանսավորման հայցվող ծավալի հիմնավորվածությունը, հայտի պատրաստման որակը, հայտի և կից փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը:

1.5. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականն է:

1.6. Փորձագետներն ու գիտական փորձաքննությունը կազմակերպող անձինք հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկություններ չեն հաղորդում:

Գնահատման չափանիշները	Թվային գնահատականը՝ միավորներով	Գնահատականը միավորներով			Փորձագետների միջին թվաբանական գնահատականը
		1 փորձագետ	2 փորձագետ	3 փորձագետ	
Ներկայացված հետազոտության թեմայի արդիականությունը	1-ից 30 միավոր				
Հետազոտության արդյունքների իրացման նշանակությունը	1-ից 30 միավոր				
Ֆինանսավորման հայցվող ծավալի հիմնավորվածությունը	1-ից 20 միավոր				
Հայտի պատրաստման որակը. շարադրման գրագիտությունը և հաջորդականությունը, հիմնավորվածությունը, ըստ բովանդակության՝ ներկայացվող պահանջներին հայտի համապատասխանությունը	1-ից 10 միավոր				
Հայտի և կից փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը	1-ից 10 միավոր				
ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ					

Հավելված 4

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

Իջևան ″____″ _____

_____, այսուհետ՝ Դրամաշնորհառու, ի դեմս _____, որը գործում է՝ հիմնվելով իր կանոնադրության վրա, մի կողմից, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը, այսուհետ՝ Դրամաշնորհ տրամադրող (ԴՏ), ի դեմս տնօրեն Ա.Հ. Մակարյանի, որը գործում է՝ հիմնվելով Մասնաճյուղի կանոնադրության վրա, մյուս կողմից, կնքեցին սույն Դրամաշնորհային պայմանագիրը հետևյալի վերաբերյալ.

Բաժին 1. Պայմանագրի առարկան

1.1. Համաձայն այս Դրամաշնորհային պայմանագրի՝ ԴՏ-ն անցկացրել է մրցույթ, որի վերջնաժամկետն էր _____, որին մասնակցել է Դրամաշնորհառուն և ընտրվել է դրամաշնորհի ֆինանսավորման համար ներկայացված ծրագրային առաջարկը իրականացնելու համար (այսուհետ՝ Ծրագիր)։ ԴՏ-ն իրականացնում է դրամաշնորհի տրամադրումը և իրականացնում է Ծրագրի դիտանցում:

Բաժին 2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Դրամաշնորհառուն պարտավոր է՝

2.1.1. Օգտագործել դրամաշնորհը բացառապես Ծրագրի դրույթների համաձայն և Իրականացնել Ծրագիրը բարձր պատասխանատվությամբ և արդյունավետությամբ։

2.1.2. Ծրագրի համար բացել առանձին բանկային հաշիվ (այսուհետ՝ Առանձնացված բանկային հաշիվ), որը կիրառվում է բացառապես Ծրագրի իրականացման նպատակների համար, և որի վրա պետք է փոխանցվեն Դրամաշնորհառուին վճարվող Դրամաշնորհային գումարները, և որից պետք է կատարվեն նախատեսված բոլոր ծախսերը։

2.1.3. Ունենալ պատշաճ ֆինանսական կառավարման համակարգ և պատրաստի ֆինանսական հաշվետվություններ՝ Բանկի համար ընդունելի հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան: Դրամաշնորհառուի ֆինանսական կառավարման համակարգը պետք է իրականացնի Ծրագրի ծախսերի առանձնացված հաշվառում: Հաշվառումը պետք է ներառի Ծրագրի ծախսերի ճշգրիտ և ամբողջական գրանցում, որոնք պետք է ապահովված լինեն համապատասխան փաստաթղթերով (հաշիվ ապրանքագրեր,

մատակարարների ընտրության հիմնավորումներ և այլն)՝ հիմնավորելով Ծրագրի շրջանակներում կատարված բոլոր ծախսերը։

2.1.4. ԴՏ-ին ներկայացնել Ծրագրի իրականացման վերջնական հաշվետվությունները Ծրագրի ավարտից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2. Դրամաշնորհառուն իրավունք ունի՝

2.2.1. Իր հայեցողությամբ ներգրավել լրացուցիչ միջոցներ երրորդ անձանց կողմից, դրամական կամ ոչ դրամական եղանակով՝ աջակցելով Ծրագրի իրականացմանը, առանց սույն Պայմանագրով նախատեսված այլ պարտավորություններ առաջացնելու։

2.4. ԴՏ-ն պարտավոր է՝

2.4.1. Պարբերաբար ստանալ և ստուգել ընթացիկ նկարագրողական և ֆինանսական հաշվետվությունները՝ ըստ անհրաժեշտության իրականացնելով Ծրագրի առաջընթացի մշտադիտարկում (մոնիթորինգ):.

2.4.2. Պահանջել պարզաբանումներ ու հավելյալ փաստաթղթեր՝ հաշվետվություններում և օժանդակող փաստաթղթերում հայտաբերված ցանկացած անհամապատասխանության վերաբերյալ։

2.5 ԴՏ-ն իրավունք ունի՝

2.5.2. Իրականացնել այցելություններ և տեղում ուսումնասիրել կատարված ծախսերի իսկությունը.

2.5.3. Դադարեցնել պայմանագիրը կամ կիրառել այլ տույժեր կամ միջոցառումներ՝ համաձայն Պայմանագրի 6, 7 և 9 Բաժինների։

Բաժին 3. Դրամաշնորհի տրամադրման ընթացակարգը

3.1. Դրամաշնորհը կազմում է առավելագույնը [_____ ՀՀ դրամ]՝ համաձայն հաստատված բյուջեի, որը տրամադրվում է Պայմանագրի 3.2 կետով սահմանված կարգով:

3.2. Դրամաշնորհային միջոցները պետք է փոխանցվեն Դրամաշնորհառուի Առանձնացված բանկային հաշվին:

Բաժին 4. Տեղեկատվության գաղտնիություն

4.1. Պայմանագրի յուրաքանչյուր կողմ համաձայնում է չբացահայտել մյուս կողմ(եր)ից ստացված տեղեկությունները, և ՀՀ օրենսդրությամբ այն համարվում է գաղտնի՝ ստանալուց

հետո 3 տարվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան տեղեկատվության տրամադրումը պահանջվում է ՀՀ օրենսդրությամբ:

4.2. Պայմանագրային դրույթների խախտման՝ գաղտնի տեղեկատվության բացահայտման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բաժին 5. Մտավոր սեփականության իրավունքներ

5.1. Սույն Պայմանագրի շրջանակներում իրականացվող Ծրագրերի ներքո Դրամաշնորհառուների կողմից մշակված մտավոր սեփականության իրավունքը պատկանում է Դրամաշնորհառուին:

Բաժին 6. Պայմանագրի դադարեցում

6.1. ԴՏ-ն կարող է դադարեցնել Պայմանագիրը և իրավունք ունի պահանջել Դրամաշնորհառուից ամբողջությամբ կամ մասամբ հետ վճարել Դրամաշնորհառուին վճարված Դրամաշնորհային գումարը՝ մինչև Պայմանագրի ավարտը հետևյալ դեպքերում (բացառությամբ 9-րդ բաժնում նկարագրված դեպքերի)՝

6.1.1. Դրամաշնորհառուն չի կատարում Պայմանագրի դրույթները:

6.1.2. Դրամաշնորհառուն ունի զգալի անհամապատասխանություններ և հետաձգումներ ծրագրի իրականացման ժամանակացույցում:

6.1.3. Դրամաշնորհառուն ձախողում է կամ չի ցանկանում ներկայացնել անհրաժեշտ հաշվետվությունները:

6.1.4. Դրամաշնորհառուն ձախողում է կամ չի ցանկանում ներկայացնել ֆինանսական փաստաթղթերի պատճենները՝ ֆինանսական հաշվետվությունը հաստատելու համար:

6.1.5. Պայմանագրի կատարման ընթացքում Դրամաշնորհառուն ներգրավվում է այնպիսի գործողություններում, որոնք, ըստ ԴՏ-ի վճռի, եղել են կամ կհանգեցնեն շահերի բախման:

6.2. Դրամաշնորհառուն կարող է դադարեցնել Պայմանագիրը՝ մինչ Պայմանագրի ժամկետի ավարտը և պարտավորվում է ամբողջությամբ կամ մասամբ հետ վճարել Դրամաշնորհառուին վճարված Դրամաշնորհային գումարը (բացառությամբ 9-րդ բաժնում նկարագրված դեպքերի):

6.3. Անկախ պայմանագրի դադարեցման հիմքերից, Պայմանագրի 4-րդ և 5-րդ Բաժիններն ուժի մեջ են մնում Պայմանագրի դադարեցումից հետո:

Բաժին 7. Ակտիվների սեփականության իրավունք

Դրամաշնորհային միջոցներով ձեռք բերված բոլոր ակտիվները (ապրանքներ, ծառայություններ և գործառնությունների արդյունքներ, նյութական և ոչ նյութական ակտիվներ) շարունակում են

մնալ ԴՏ-ի սեփականությունը՝ մինչև Ծրագրի հաջող ավարտը: Եթե կանոնավոր մոնիթորինգների ընթացքում պարզվում է, որ Դրամաշնորհառուի կողմից ձեռք բերված ակտիվները գոյություն չունեն կամ չարաշահվում են, ապա ԴՏ-ն իրեն իրավունք է վերապահում կասեցնել Ծրագրի իրականացումը և կիրառել սույն Պայմանագրի 6-րդ Բաժնում նշված միջոցառումները: Դրամաշնորհառուն պատասխանատու է ամբողջ գույքի և սարքավորումների պատշաճ շահագործման և պահպանման համար: Անհրաժեշտության դեպքում, ԴՏ-ն կարող է պահանջել Դրամաշնորհառուից ապահովել այս գույքի ապահովագրությունը թալանից, գողություններից, հրդեհից և այլնից:

Բաժին 8. Կողմերի պարտավորությունները

8.1. Եթե Դրամաշնորհառուն չկատարի Պայմանագրով սահմանված պարտականությունները կամ դրանք պատշաճ կերպով չկատարի (պայմանագրի խախտում), ԴՏ-ն իրավունք ունի հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Դրամաշնորհառուին վճարված ընդհանուր դրամաշնորհի գումարի 0.5%-ի չափով տուգանք կիրառել: Դրամաշնորհառուին վճարվելիք Դրամաշնորհի գումարը կարող է կրճատվել տույժի չափով, կամ տույժի գումարը կարող է նվազեցվել Դրամաշնորհի հաջորդ վճարումից:

8.2. Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.3. Յուրաքանչյուր կողմ պատասխանատվություն է կրում իր մեղքով (կողմի գործողությունների կամ անգործության արդյունքում) մյուս կողմից երրորդ կողմին պատճառված վնասի համար:

Բաժին 9. Ֆորս մաժոր

9.1. Կողմերը ազատվում են Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ մասնակի կամ լրիվ չկատարելու համար պատասխանատվությունից, եթե այդպիսի անգործունակությունը պայմանավորված է ֆորս մաժորային հանգամանքներով, որոնք առաջացել են սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, և որոնք Կողմերն ի վիճակի չեն եղել կանխատեսել կամ կանխել: Նման հանգամանքները ներառում են երկրաշարժեր, ջրհեղեղներ, հրդեհներ, պատերազմ, ռազմական պարետային ժամեր և պետական մարմինների գործողություններ և այլն:

Բաժին 10. Եզրափակիչ դրույթներ

10.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրության պահից և ուժի մեջ է մինչև Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

10.2. Պայմանագրից բխող բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Այն դեպքում, երբ համաձայնություն ձեռք չի բերվել, վեճը լուծվում է ՀՀ դատական գործընթացներով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.3. Կողմերը հաստատում են, որ Պայմանագիրը կնքելու պահին նրանք տեղյակ չեն որևէ պայմանի մասին, ըստ որի նրանք իրավասու չեն կամ չեն կարող կնքել կամ իրականացնել Պայմանագիրը:

10.4. Կողմերը հաստատում են, որ նրանք ծանոթացել են սույն Պայմանագրի բոլոր բաժիններին:

10.5. Կողմերը գիտակցում են Պայմանագրում փոփոխություններ կատարելու հնարավորությունը: Պայմանագրի ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն գրավոր է և ստորագրված է Կողմերի կողմից:

10.6. Պայմանագրերի վավերապայմաններում տրված կողմերի էլեկտրոնային հասցեներով փոխանակված ծանուցումները և հաղորդագրությունները համարվում են վավեր ծանուցումներ:

10.7. Պայմանագիրը բաղկացած է ___ էջից՝ գրված հայերեն լեզվով և ստորագրված երկու համարժեք օրինակներով՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

Բաժին 11. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Դրամաշնորհառու	Դրամաշնորհի տրամադրող
“_____”	“_____”
ՀՎՀՀ _____	ՀՎՀՀ _____
Հասցե՝ _____	Հասցե՝ _____
Էլ.հասցե՝ _____	Էլ.հասցե՝ _____